## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք հղում փիկնանց եւ օրիորդաց՝ Ս. Աստվածածնի Ավետման տոնի եւ Մայրության ու գեղեցկության օրվա առթիվ:

Սուրբ Աստվածածինը, ով «օրհնյալն է կանանց մեջ», առ Աստված հավատքի, մայրական հոգատարության, սիրո եւ նվիրումի ներշնչման աղբյուր եւ օրինակ է բոլոր կանանց համար: Հոգեւորոգ այս օրը մեր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնություն՝ աղոթքով եւ մաղթանքով, որ մայրերն ուրախ սրտով ու երջանիկ հոգով սնեն իրենց մանուկներին եւ մեծացնեն նրանց խաղաղության ու բարօրության մեջ:

Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Տերը Ս. Տիրամոր գթառատ բարեխոսությամբ մեր մայրերին, քույրերին ու դուստրերին պարգեւի քաջառողջ արեւշատություն, երկնային ամենայն բարիք եւ շնորհներ՝ ջերմ հավատքով ապրելու իրենց կյանքը, հավատավոր գործերի օրհնությամբ լցնելու իրենց ընտանեկան հարկերը, պայծառություն բերելու մեր երկրին, ազգային եւ եկեղեցական մեր կյանքին: